ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. սեպտեմբերի 7-9-ը Ռուսաստանի Դաշնության ք. Կազան

կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Վահրամ Դումանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Կազան, 2021թ. սեպտեմբերի 7-9-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարար Օլեգ Մատիցին

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Ռուսաստան՝ սպորտային պետություն» («Россия-спортивная держава») 9-րդ ֆորումին, ինչպես նաև ԱՊՀ առաջին խաղերի պաշտոնական միջոցառումներին:

6. **Քննարկված թեմաները՝**

ԱՊՀ երկրների սպորտի պատասխանատուների հետ քննարկել եմ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտներում համագործակցության հեռանկարները, համատեղ մարզական միջոցառումների անցկացման և մասնագետների փորձի փոխանակման հնարավորությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Մասնակցել եմ միջոցառման շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին, նիստերին, գիտական կոնֆերանսին, ցուցահանդեսին, որոնց ընթացքում քննարկվել են պրոֆեսիոնալ և զանգվածային սպորտի, ֆիզիկական կուլտուրայի ոլորտի ներկայիս մարտահրավերները և զարգացման հեռանկարները:

Հանդիպել եմ ԱՊՀ առաջին խաղերին մասնակցող ՀՀ հավաքական թիմերի մարզիչներին և մարզիկներին:

Հանդիպումներ եմ ունեցել ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Լեոնիդ Անֆիմովի, Ուզբեկստանի Հանրապետության փոխվարչապետ Ազիզ Աբդուխակիմովի, Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարար Սերգեյ Կովալչուկի, , Եգիպտոսի Արաբական Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարար դոկտոր Ասրաֆ Սոբբիի և սպորտի ոլորտի այլ ներկայացուցիչների հետ, որոնց հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ երկկողմ համագործակցության վերաբերյալ:

Ներկա եմ գտնվել «Մանկապատանեկան սպորտ», «Ժամանակակից սպորտ», «Նորարարություններ և հեռանկարներ» խորագրով ցուցահանդեսին, որը ներառում էր բազմաթիվ տաղավարներ, այդ թվում՝ «Սպորտ, գիտություն և կրթություն», «Սպորտային օբյեկտների նախագծում և կառուցում», «Սպորտային սարքավորումներ» և այլն:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

14.09.2021թ.